# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ


<< 08 >> 03 2018թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: ____________ հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77


ՈՒՂԵՐՁ

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԹԻՎ

Սիրելի՛ կանայք, մայրեր և քույրեր, ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Հայ կանայք միշտ եղել են ազգապահպանության երաշխավորն ու մեր դարավոր ավանդույթների կրողը, նվիրումով մասնակցել են պետական և հասարակական կյանքին: Այս տոնը ևս մեկ առիթ է լավագույն մաղթանքներ, երախտագիտության և գնահատանքի խոսքեր ուղղելու Ձեզ՝ Ձեր հոգատարության, համբերության, ազգանվեր առաքելության համար:

Հավատացած եմ, որ Դուք, սիրելի կանայք, այսուհետ էլ ձեր ավանդն ու մասնակցությունն եք ունենալու հայ ընտանիքի կերտման, հայապահպանության, պետության արժանի քաղաքացիների ձևավորման, հայոց պետականության ամրապնդման գործում:

Սիրելի՛ կանայք, շնորհավորելով այս գեղեցիկ տոնի կապակցությամբ, մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, խաղաղություն, մայրության բերկրանք և անսահման ջերմություն:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ